Հայաստանի Հանրապետության

աշխատանքի ֆ սոցիալական հարցերի նախարարություն

Բնակարանային ապահովության ֆ հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ֆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ԲՍՀՊ)

Բանակցված տարբերակ

Դեկտեմբերի 1, 2025 թ.

Բնապահպանական յ սոցիալական հանձնառությունների պլան

1. Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «Վարկառու») կիրականացնի Բնակարանային ապահովության և հիփոթեքային շուկայի բարելավման ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») 1-ին և 3-րդ մասերը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ «ԱՍՀՆ») ներգրավմամբ, ինչպես ամրագրված է Վարկառուի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) (այսուհետ՝ «Բանկ») միջև կնքված ֆինանսավորման համաձայնագրում (այսուհետ՝ «Ֆինանսավորման համաձայնագիր») և Վարկառուի և Բանկի միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրում (այսուհետ՝ «Դրամաշնորհային համաձայնագիր»), որի շրջանակում Բանկը գործում է որպես ՎԶՄԲ ավելցուկային միջոցներով ձևավորված «Կենսունակ մոլորակ» հիմնադրամի հոգաբարձու՝ համակարգելով բոլոր գործողությունները Ազգային հիփոթեքային ընկերության (այսուհետ՝ «ԱՀԸ») հետ, որը պատասխանատու է Ծրագրի 2-րդ մասի իրականացման համար՝ համաձայն Բանկի և ԱՀԸ միջև կնքված Վարկային համաձայնագրի և համապատասխան Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի (այսուհետ «ԱՀԸ ԲՍՀՊ»): Բանկը համաձայնություն է հայտնել ֆինանսավորում տրամադրել Ծրագրի իրականացման համար՝ ինչպես սահմանված է Ֆինանսավորման համաձայնագրում և Դրամաշնորհային համաձայնագրում:

2. Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ Ծրագիրն իրականացվի ինչպես Բնապահպանական և սոցիալական ստանդարտների, այնպես էլ սույն Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի (այսուհետ՝ «ԲՍՀՊ») պահանջներին համապատասխան՝ Բանկի համար ընդունելի եղանակով: ԲՍՀՊ-ն Ֆինանսավորման համաձայնագրի և Դրամաշնորհային համաձայնագրի մաս է կազմում: Եթե սույն ԲՍՀՊ-ում այլ բան սահմանված չէ, ապա փաստաթղթում գործածվող հապավումների սահմանումները ներկայացված են Ֆինանսավորման համաձայնագրում և Դրամաշնորհային համաձայնագրում:

3. Ի հավելումն վերը նշվածի, սույն ԲՍԿՊ-ով սահմանվում են նյութական միջոցները և գործողությունները, որոնք Վարկառուն պարտավոր է իրականացնել կամ նպաստել դրանց իրականացմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, սահմանել դրանց համապատասխան ժամկետները, ինչպիսիք են ինստիտուցիոնալ, կադրային, վերապատրաստման, մոնիթորինգի և հաշվետվականության կարգավորումները և բողոքների կառավարումը: ԲՍՀՊ-ն նաև սահմանում է բնապահպանական և սոցիալական (ԲՍ) փաստաթղթերը, որոնք պետք է պատրաստվեն կամ թարմացվեն, դրվեն քննարկման, հրապարակվեն և իրականացվեն Ծրագրի շրջանակներում՝ ԲՍՍ պահանջներին համապատասխան և Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ: Նշված ԲՍ փաստաթղթերը կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել Բանկի կողմից՝ նախնական գրավոր համաձայնությամբ: Ինչպես նախատեսված է Ֆինանսավորման համաձայնագրում և Դրամաշնորհային համաձայնագրում՝ Վարկառուն պարտավոր է ապահովել անհրաժեշտ միջոցների առկայությունը՝ ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը ֆինանսավորելու համար:

4. Ըստ Բանկի և Վարկառուի միջև պայմանավորվածության, սույն ԲՍՀՊ-ն ժամանակ առ ժամանակ ըստ անհրաժեշտության կվերանայվի՝ ներառելու և արտացոլելու Ծրագրի կատարողականը կամ Ծրագրում իրականացված կամ չնախատեսված հանգամանքներով պայմանավորված փոփոխությունների ադապտիվ կառավարումը: Այս պայմաններում Բանկը և Վարկառուն ըստ պայմանավորվածության պետք է թարմացնեն ԲՍՀՊ-ն՝ Բանկի և Համաձայնագրերում նշված Վարկառուի ներկայացուցչի միջև ստորագրված նամակների

փոխանակման միջոցով՝ այդ փոփոխություններն արտացոլելու նպատակով: Թարմացված ԲՍՀՊ-ն պետք է անմիջապես հրապարակվի Վարկառուի կողմից:

5. Ստորև բերված «Իրականացման պատրաստականության ցուցանիշներ» ենթաբաժինը սահմանում է մոնիթորինգի ենթակա գործողությունները և միջոցառումները՝ սույն ԲՍՀՊ-ով սահմանված կարգով գործողությունների մեկնարկին Ծրագրի պատրաստականությունը գնահատելու համար: Այդուհանդերձ, սույն ԲՍՀՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումները և գործողությունները պետք է իրականացվեն այնպես, ինչպես նշված է ստորև բերված «Ժամանակացույց» սյունակում՝ անկախ նշված ենթաբաժնում դրանց առկայությունից:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ			
Ա	ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ա. Ձևավորել Ծրագրի իրականացման թիմ (ԾԻԹ), որը համալրված կլինի համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով (այդ թվում ԲՍ և Հաղորդակցության և շահագրգիռ կողմերի ներգրավման մեկական մասնագետ (ՀՇԿՆՄ)) և ռեսուրսներով՝ Ծրագրի 1-ին և 3-րդ մասերի բնապահպանական, սոցիալական, առողջապահական և անվտանգային (ԲՍԱԱ) ռիսկերի ու ազդեցությունների կառավարմանը և շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումների իրականացմանն աջակցելու համար: բ. Համակարգել ԱՀԸ-ի հետ Ծրագրի 2-րդ մասի ԲՍԱԱ ռիսկերի և ազդեցությունների կառավարման հարցերը, ներառյալ տվյալների փոխանակման մեխանիզմները, որոնք պետք է համահունչ լինեն այս ԲՍՀՊ-ի, ԱՀԸ ԲՍՀՊ-ի և ԲՍՍ-ների պահանջներին: գ. Համակարգել համապատասխան պետական մարմինների հետ՝ թե՛ ազգային, թե՛ տեղական մակարդակներում, Ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումների իրականացումը և Ծրագրի 1-ին մասի ԲՍ ռիսկերի և ազդեցությունների կառավարումը: դ. Փոփոխություններ կատարել Մասնակից ֆինանսական հաստատությունների (այսուհետ՝ «ՄՖՀ») հետ գործող համաձայնագրերում՝ Ծրագրի 1.2-րդ մասի ԲՍ ռիսկերը և ազդեցությունները կառավարելու և այս ԲՍՀՊ-ի հետ համապատասխանությունն ապահովելու համար: ե.Ապահովել, որ ՄՖՀ-ների հետ կնքված ցանկացած նոր համաձայնագիր համապատասխանի սույն ԲՍՀՊ-ին: զ. Պահանջել, որ յուրաքանչյուր ՄՖՀ նշանակի ԲՍԱԱ ռիսկերի և ազդեցությունների կառավարման համար պատասխանատու մասնագետ, ինչպես ամրագրված է Վարկառուի և ՄՖՀ-ների միջև կնքվող համաձայնագրերում՝ ԲՍՍ-ների և ԲՍԿՀ պահանջներին համապատասխան:	ա. ԾԻԹ-ը, որը պետք է ներառի մեկ ԲՍ և ՀՇԿՆՄ մասնագետ, պետք է ձևավորվի մինչև Ծրագրի ուժի մեջ մտնելը: բ. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: գ. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: դ. Մինչև Ծրագրի 1-ին և 3-րդ բաղադրիչներով ֆինանսավորվող գործունեությունների համար միջոցների հատկացումը: ե. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: զ. Նույն ժամանակացույցը ինչ (դ)-ն գոյություն ունեցող համաձայնագրերի համար և նույն ժամանակացույցը ինչ (ե)-ն նոր համաձայնագրերի համար:	ԱՍՀՆ/ԾԻԹ (ա)-ի և (գ)-ի համար Գործողություններ բ, դ, ե և զ-ն կիրագործվեն ԱՍՀՆ/ԾԻԹ-ի կողմից՝ համակարգելով դրանց իրականացումը ԱՀԸ-ի և ՄՖՀ-ների հետ:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Բ	**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** Որպես Ծրագրի գործառնական ձեռնարկի (ԾԳՁ) և ԲՍԿՀ-ի մաս մշակել և իրականացնել կարողությունների զարգացման ծրագիր (ԿԶԾ), որը ներառելու է հետևյալը. • Ծրագրում ներգրավված ԱՍՀՆ աշխատակիցների վերապատրաստում ԲՍԿՀ-ի, ԲՍ ռիսկերի գնահատման ընթացակարգերի, սեռական շահագործման և բռնության (ՍՇԲ), սեռական ոտնձգությունների (ՍՈ) կանխարգելման, Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇԿՆՊ), ինչպես նաև Ծրագրի հետադարձ կապի և բողոքների լուծման մեխանիզմների (ՀԿԲԼՄ) վերաբերյալ, • ՄՖՀ-ների համապատասխան աշխատակիցների համար ապահովել նպատակային ուսուցում ԲՍԿՀ-ի ռիսկերի գնահատման և Ծրագրի ՀԿԲԼՄ-ի համապատասխան ասպեկտների վերաբերյալ, • կարողությունների զարգացման ուսուցում Միասնական սոցիալական ծառայության (ՍՏՏ) և «114» թեժ գծի աշխատակիցների համար՝ Ծրագրի գործունեության, շահառուների ներգրավման, Բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի (ԲԱԾ) մանրամասների, ինչպես նաև Ծրագրի ՀԿԲԼՄ-ի և բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ, • տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) իրազեկում և ուսուցում՝ փախստականների և խոցելի ընտանիքների ներգրավման միջոցառումներին աջակցելու նպատակով:	Հաստատել Ծրագրի մեկնարկից ոչ ուշ, քան 3 (երեք) ամիս հետո, այնուհետև կիրառել Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
Գ	**ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Պատրաստել և Բանկին ներկայացնել մոնիթորինգի կանոնավոր հաշվետվություններ Ծրագրի ԲՍԱԱ կատարողականի վերաբերյալ: Հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալը. • Սույն ԲՍՀՊ-ով և ԲՍԿՀ-ով պահանջվող ԲՍ միջոցառումների մշակման և իրականացման կարգավիճակը, • ՄՖՀ-ների կողմից կիրառվող ԲՍ ռիսկերի գնահատման գործընթացի արդյունքները, • Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇԿՆՊ) շրջանակներում իրականացված միջոցառումների ամփոփումը,	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ սկսած մեկնարկի ամսաթվից, Բանկին ներկայացնել եռամսյակային ԲՍԱԱ մոնիթորինգի հաշվետվություններ:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	• ՀԿԲԼՄ շրջանակում ներկայացված բողոքներ, բողոքների գրանցամատյանը և դրանց ուղղությամբ ձեռնարկվող աշխատանքները , • ՄՖՀ-ների կատարողականը ԲՍԱԱ պահանջների կատարման առումով՝ ըստ ԱՍՀՆ ներկայացվող ամսական հաշվետվությունների, • Ստորև բերված «Ե» բաժնի միջոցառումների շրջանակներում հաղորդված միջադեպերի և վթարների քանակը և լուծման կարգավիճակը:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ սկսած մեկնարկի ամսաթվից, Բանկին ներկայացնել առաջընթացի կիսամյակային հաշվետվություններ: Յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնել հաշվետու ժամանակահատվածի ավարտից ոչ ուշ քան 45 օրվա ընթացքում:	
Դ	**ՄՖՀ-ների ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Համաձայն ԾԳՁ-ում և ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ում և սույն ԲՍՀՊ-ում սահմանված ԲՍ պահանջների՝ ՄՖՀ-ներից պահանջել պատրաստել և Բանկին ներկայացնել մոնիթորինգի ամսական հաշվետվություններ՝ ԲՍԱԱ ցուցանիշների և բողոքների կառավարման, ՄՖԿ-ների ԲՍԿՀ գործառույթներում կատարված ցանկացած փոփոխությունների, ինչպես նաև բացթողումների վերացման նպատակով միջոցառումների համապատասխանեցման և իրականացման վերաբերյալ՝ ինչպես նախատեսված է Գործողություն 9.2-ով:	Ամսական հաշվետվությունները Բանկին ներկայացնել որպես վերևում նշված «Գործողություն Գ»-ի շրջանակներում ներկայացվող հաշվետվությունների հավելված:	ԱՍՀՆ/ԾԻԹ
Ե	**ՄԻՋԱԴԵՊԵՐ ԵՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ** ա. Տեղեկացնել Բանկին Ծրագրին առնչվող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որը ունի կամ կարող է ունենալ զգալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, լայն հանրության կամ Ծրագրի աշխատողների վրա, ներառյալ այն դեպքերը, որոնք հանգեցնում են Ծրագրի աշխատակիցների կամ այլ մարդկանց մահվան կամ լուրջ վնասվածքների, ինչպես նաև բռնության, խտրականության կամ բողոքի ակտերը, մշակութային ժառանգության կամ կենսաբազմազանության ռեսուրսների վրա անսպասելի ազդեցությունները, շրջակա միջավայրի աղտոտումը, հարկադրական կամ մանկական աշխատուժի օգտագործումը, տեղահանումը առանց պատշաճ իրավական ընթացակարգի ապահովման (հարկադիր վտարում), սեռական շահագործման և բռնության/սեռական ոտնձգության (ՍՇԲ/ՍՈ) մեղադրանքները կամ հիվանդությունների բռնկումները: Պատահարի կամ վթարի վերաբերյալ մանրամասները ներկայացնել Բանկին՝ վերջինիս պահանջով: բ. Ապահովել միջադեպի կամ պատահարի պատշաճ ուսումնասիրությունը՝ դրա անմիջական, խորքային կամ հիմնական պատճառները պարզելու համար: Պատրաստել, Բանկի հետ համաձայնեցնել և իրականացնել Ուղղիչ գործողությունների պլան (ՈՒԳՊ),	ա. Տեղեկացնել Բանկին՝ պատահարի կամ միջադեպի մասին տեղեկանալուց ոչ ուշ քան 48 ժամ հետո: Բանկի պահանջով ներկայացնել դեպքի մանրամասները:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	որը սահմանում է պատահարի կամ միջադեպի կարգավորման, դրանց կրկնությունը կանխելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները և գործողությունները:	բ. Ուսումնասիրության հաշվետվությունը և ՈՒԳՊ-ն ներկայացնել Բանկին՝ նախնական ծանուցումը ներկայացնելուց ոչ ուշ, քան 10 աշխատանքային օր հետո, եթե Բանկի կողմից գրավոր կերպով այլ ժամկետ չի սահմանվել:	
ԲՍՍ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
1.1	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ** ա. Վերջնականացնել, վերահիրապարակել և իրականացնել ԲՍ պահանջների ստուգման ընթացակարգերը Ծրագրի 1-ին մասով նախատեսվող բնակարանային ֆինանսավորման միջոցառումների համար՝ ԲՍՍ-ների և ԲՍԿՀ պահանջներին համապատասխա	ա. Վերջնականացնել և վերահրատարակել ԲՍ ռիսկերի գնահատման ընթացակարգերը մինչև Ծրագրի ուժի մեջ մտնելը՝ որպես ԲՍԿՀ-ի մաս, և ապահովել դրանց կիրառությունը Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
	բ. Վերջնականացնել և իրականացնել Բացառությունների ցուցակը՝ ԲՍ սքրինինգի ընթացակարգերի համապատասխան և չտրամադրել ֆինանսավորում այն գործունեությունների համար, որոնք ներառում են ԲՍ Էական և բարձր ռիսկեր, ներառյալ ի թիվս այլոց. ա) չեն ենթարկվել ԲՍ գնահատման, բ) ունեն համայնքների առողջության և անվտանգության վրա բացասական ԲՍ ռիսկեր և ազդեցություններ, որոնք հնարավոր չէ պատշաճ կերպով կանխել, նվազեցնել կամ մեղմել համաձայն ԲՍՍ4-ի, գ) ներառում են ֆիզիկական և/կամ տնտեսական տեղահանում համաձայն ԲՍՍ5-ի, դ) ունեն բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, այդ թվում՝ բնական միջավայրերի, կարևոր կենսաբանական միջավայրերի, էկոլոգիապես զգայուն տարածքների, օրենսդրությամբ պաշտպանված և/կամ միջազգայնորեն ճանաչված կենսաբազմազանության բարձր արժեք ունեցող տարածքների վրա համաձայն ԲՍՍ6-ի, ե) առաջացնում են էական ռիսկեր և ազդեցություններ նյութական կամ ոչ նյութական մշակութային ժառանգության վրա համաձայն ԲՍՍ8-ի, կամ զ) ներառում են Բացառությունների ցուցակում նշված ցանկացած այլ գործունեություն:	բ. Վերջնականացնել և իրականացնել Բացառությունների ցուցակը մինչև Ծրագրի ուժի մեջ մտնելը և ապահովել դրանց կիրառությունը Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում և և որպես ծրագրի գործունեությունների սքրինինգի, ընտրության և մոնիթորինգի գործընթացի մաս: Համապատասխան պահանջները ներառված կլինեն	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
		յուրաքանչյուր ՄՖՀ և ԱՍՀՆ միջև համաձայնագրում:	
1.2	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ** Իրականացնել խորհրդատվություններ, ուսումնասիրություններ, կարողությունների զարգացում, վերապատրաստում և Ծրագրով նախատեսված տեխնիկական աջակցության այլ գործողություններ, ներառյալ բնակարանային ապահովման ազգային շրջանակի և ճանապարհային քարտեզի մշակումը, Ծրագրի շահառուների գոհունակության գնահատման միջնաժամկետ և ավարտական ուսումնասիրությունները, որոնք պետք է իրականացվեն Բանկի համար ընդունելի Տեխնիկական առաջադրանքներով՝ ԲՍՍ-ներին պահանջներին համապատասխան:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
1.3	**ՎԱՐԿԱՌՈՒԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** ա. Մասնակիորեն կիրառել Վարկառուի քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը (“Վարկառուի” ԲՍ շրջանակ), այնքանով որքանով այն համապատասխանում է կիրառելի ԲՍՍ-ներին, և ապահովել, որ Ծրագրի ԲՍԱԱ ռիսկերի և ազդեցությունների կառավարումը, մասնավորապես՝ Ծրագրում ընդգրկված աշխատողների աշխատանքի կազմակերպման և պայմանների, թափոնների կառավարման և ԱԱԱ միջոցառումների, համայնքի առողջության և անվտանգության, ՍՇԲ/ՍՈ դեպքերի կանխարգելման, մշակութային ժառանգության ռիսկերի և ազդեցությունների, ֆինանսական միջնորդների (ՖՄ) և բողոքների լուծման մեխանիզմների կառավարումը համապատասխանում է ԲՍՍ 2, 3, 4, 8, 9, 10-ի և այս ԲՀՊ պահանջներին: Ապահովել յուրաքանչյուր ԲՍՍ-ի հետ կապված բացթողումների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ ԲՍՍ-ների և սույն ԲՀՊ-ի պահանջներին համապատասխան: Վարկառուի ԲՍ շրջանակի և ԲՍՍ-ների պահանջների միջև որևէ անհամապատասխանության դեպքում առաջնահերթ կիրառելի է լինելու համապատասխան ԲՍՍ պահանջները: բ. Տեղեկացնել Բանկին. ա) Վարկառուի ԲՍ շրջանակում կատարված ցանկացած փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Ծրագրի ԲՍ ռիսկերի կառավարման վրա կամ բացասաբար ազդել Վարկառուի՝ Ծրագրի ԲՍ ռիսկերի կառավարման կարողությունների վրա՝ սույն ԲՀՊ-ի պահանջներին համապատասխան, բ) նշված փոփոխությունների ուղղությամբ ձեռնարկված կամ նախատեսվող պատասխան միջոցառումների մասին:	ա. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: բ. Նույն ժամանակացույցը, ինչ վերը նշված (Ե) գործողության համար	ԱՍՀՆ/ԾԻԹ
1.4	**ՀԵՏԱԴԱՐՁ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	Իրականացնել հետադարձ ֆինանսավորման ենթակա միջոցառումների ԲՍ ռիսկերի պատշաճ ուսումնասիրություն՝ նույնականացնելու և ապահովելու, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված բացերը վերացնելու համար անհրաժեշտ գործողություններն իրականացված են և Բանկին ներկայացնել հաշվետվություն, որը ցույց է տալիս, որ բացերը վերացնելուն ուղղված միջոցառումները, ներառյալ առկա բողոքների և վեճերի լուծումը, ձեռնարկվել են այս ԲՍՀՊ-ին և ԲՍՍ-ներին համապատասխան:	Հետադարձ ֆինանսավորման հայտի ներկայացման շրջանակներում և հետադարձ ֆինանսավորման տրամադրումից առաջ:	
ԲՍՍ 2: ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ			
2.1	**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** Ապահովել, որ ծրագրի աշխատողների ներգրավվածությունը ծրագրի գործողություններում համահունչ է Վարկառուի Աշխատանքի օրենսգրքին և ԲՍՍ 2-ին: Այս ուղղությամբ պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները. ա. Մշակել և ընդունել Վարքագծի կանոններ (ՎԿ) Ծրագրի բոլոր աշխատակիցների համար: ՎԿ-ները պետք է, ի թիվս այլոց, ներառեն դրույթներ ՍՇԲ/ՍՈ, խտրականության և մանկական/հարկադիր աշխատանքի կանխարգելման վերաբերյալ: բ. Համաձայն ԲՍՍ 2-ի՝ ապահովել, որ Ծրագրի անմիջական և պայմանագրային աշխատողները ստանան իրենց աշխատանքի պայմաններին վերաբերող պարզ և հասկանալի տեղեկատվություն և փաստաթղթեր՝ գրավոր պայմանագրերի միջոցով, որտեղ նշված կլինեն իրենց իրավունքները, ներառյալ, ի թիվս այլոց, իրենց աշխատանքային ժամերը, աշխատավարձերը, աշխատանքային ժամերից դուրս աշխատելը, փոխհատուցումն ու արտոնությունները, ինչպես նաև, կիրառելիության դեպքում, աշխատանքից ազատման գրավոր ծանուցումը և համապատասխան փոխհատուցում ստանալու իրավունքները: գ. Գործադրել ԱԱԱ միջոցառումներ՝ հաշվի առնելով Ընդհանուր բնապահպանական, առողջապահական և անվտանգության ուղեցույցները (ԲՍՍՈՒ-ները), առանձին ոլորտային ԲՍՍՈՒ-ները և, համապատասխանության դեպքում, այլ Միջազգային լավագույն արդյունաբերական պրակտիկան՝ ներառյալ ստորև նշված Գործողություն 2.2-ի շրջանակում	ա. Մշակել ՎԿ-ները մինչև Ծրագրի աշխատակիցների ներգրավումը կամ նշանակում և ապահովել դրանց կիրառումը Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: բ. Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	դ. Գործադրել միջոցառումներ, ըստ անհրաժեշտության, որոնք, ի թիվս այլոց, ուղղված են հետևյալին. ա) կանխել հարկադիր աշխատանքի և մանկական աշխատանքի օգտագործման բոլոր ձևերը, (բ) հնարավորություն տալ աշխատողներին օգտվել, ի թիվս այլոց, բողոքարկման մեխանիզմներից՝ առանց վրեժխնդրության վախի և գ) ապահովել աշխատողների՝ կազմակերպություններ կամ այլընտրանքային մեխանիզմներ ստեղծելու և այդ կառույցներին միանալու ազատությունը՝ իրենց մտահոգությունները արտահայտելու, աշխատանքի ու աշխատանքային պայմանների հետ կապված իրենց իրավունքները պաշտպանելու համար: ե. ԱՍՀՆ ԲՍԿԾ-ի ԲԲ տեխնիկական բնութագրերում, ինչպես նաև Վարկառուի ՄՖՀ-ների միջև կնքվող համաձայնագրերում ներառել աշխատանքի կառավարման համապատասխան ընթացակարգեր և միջոցառումներ: Վարկառուի Աշխատանքային օրենսգրքի և ԲՍՉ 2-ի միջև որևէ անհամապատասխանության դեպքում առաջնահերթ կիրառելի են լինելու ԲՍՉ 2-ում սահմանված դրույթները:	ե) Ներգրավել ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ում և պայմանագրերում և ապահովել կատարումը նույն ժամանակահատվածում, որը նախատեսված է ստորև նշված Գործողություններ 9.1 և 9.2-ի համար և ապահովել դրանց համապատասխանությունը ողջ Ծրագրի իրականացման ընթացքում:	
2.2	**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ** ա. Մշակել և իրականացնել ԱԱԱ պլանի դրույթները՝ ԲՍԿՀ-ի շրջանակում Ծրագրի Մաս 1.2-ի ԱԱԱՊ ռիսկերը և ազդեցությունները կառավարելու համար: բ. Պահանջել, որպեսզի բոլոր ՄՖՀ-ները իրենց ԲՍԿՀ-ների շրջանակում ընդունեն և ներդնեն ԱԱԱ կառավարման միջոցառումներ, որոնք համահունչ կլինեն նաև Ծրագրի ԱԱԱՊ-ի պահանջներին:	ա. Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում: բ. Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.2.1-ի համար՝ ՄՖՀ-ների ԲՍԿՀ-ների վերանայում և բարելավում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
2.3	**ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ** ա. ԾԳԶ-ի շրջանակում մշակել և գործարկել բողոքների կարգավորման մեխանիզմ (ԲՄ) Ծրագրի աշխատողների համար, որը պետք է համահունչ լինի ԲՍՍ2-ին:	ա. Մշակել ԲՄ՝ մինչև Ծրագրում աշխատողներին ներգրավելը, այնուհետև պահպանել և կիրառել այն Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	բ. ՄՖՀ-ներից պահանջել ստեղծել և իրականացնել ԲՄ՝ համաձայն սույն ԲՍՀՊ-ի և ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ի:	բ. Նույն ժամանակահատվածը որը նախատեսված է ստորև բերված Գործողություն 9.2-ի համար:	
ԲՍՍ 3. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
3.1	**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ** ԱՍՀՆ ԲՍԿՀ-ի շրջանակում մշակել և հաստատել Թափոնների կառավարման ընթացակարգեր (ԹԿԸ)՝ վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների հետ կապված ասպեկտները գնահատելու, բացառելու և կառավարելու համար: Այս գործընթացը պետք է իրականացվի ԲՍ ռիսկերի և ազդեցությունների գնահատման ու բացառման ընթացակարգերին, ինչպես նաև ԲՍՍ3-ի պահանջներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
3.2	**ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ֊ ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ֊ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** Ստորև նշված Գործողություն 9.1.1-ով նախատեսված ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ում ներառել ռեսուրսների արդյունավետության և աղտոտման կանխարգելման և կառավարման միջոցառումները՝ ԲՍՍ-ների պահանջներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
ԲՍՍ 4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ			
4.1	**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** Ստորև նշված Գործողություն 9.1.1-ով նախատեսված ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ի շրջանակում, ըստ անհրաժեշտության, գնահատել և կառավարել Ծրագրի գործունեությունից բխող առանձին ռիսկերը և ազդեցությունները համայնքի նկատմամբ, ներառյալ երթևեկության և ճանապարհային անվտանգության հետ կապված հարցերը՝ ԲՍՍ-ներով նախատեսված պահանջներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
4.2	**ՍԾԲ ԵՎ ՍՈ ՌԻՍԿԵՐ** Ստորև նշված Գործողություն 9.1.1-ով նախատեսված ԲՍԿՀ-ի շրջանակում, ըստ անհրաժեշտության, մշակել և կիրառել ՍԾՀ/ՍՈ կանխարգելման գործողություններ՝ ԲՍՍ-ների պահանջներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է ստորև նշված Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
ԲՍՍ 5. ՀՈՂԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ			
5.1	Համաձայն ԲՍՍ 5-ի, ԲՍՍ 9-ի և ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ համապատասխան դրույթների՝ սքրինինգի ենթարկել վերը նշված Գործողություն 1.1.1-ին համապատասխան առաջարկվող ծրագրային միջոցառումները և Ծրագրից բացառել այն գործողությունները, որոնք կարող են ներառել հողի օտարում, ֆիզիկական կամ տնտեսական տեղահանում, կամ հողօգտագործման սահմանափակումներ: Նման գործողությունները կհամարվեն անթույլատրելի և չեն ֆինանսավորվի:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է վերը նշված Գործողություն 1.1.1-ի շրջանակներում կատարվող ԲՍ գնահատման և ստորև նշված Գործողություն 9.1.1-ի շրջանակում ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-օ մշակման և իրականացման համար:	ԱՍՀՆ/ԾԻԹ
ԲՍՍ 6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՝ ԿԵՆԴԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ			
6.1	Համաձայն ԲՍՍ 6-ի, ԲՍՍ 9-ի և ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ի համապատասխան դրույթների՝ սքրինինգի ենթարկել վերը նշված Գործողություն 1.1.1-ին համապատասխան առաջարկվող ծրագրային միջոցառումները և Ծրագրից բացառել այն գործողությունները, որոնք կարող են էական բացասական ազդեցություններ գործադրել բնական կամ կարևոր նշանակության բնակավայրերի կամ կենսաբազմազանության վրա, որը չեն կարող կանխվել, նվազագույնի հասցվել, վերականգնվել կամ փոխհատուցվի ԲՍՍ6-ի համաձայն: Ցանկացած նման գործունեություն կհամարվի անընդունելի և չի ֆինանսավորվի:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է վերը նշված Գործողություն 1.1.1-ի շրջանակներում կատարվող ԲՍ գնահատման և ստորև նշված Գործողություն 9.1.1-ի շրջանակում ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-օ մշակման և իրականացման համար:	ԱՍՀՆ/ԾԻԹ
ԲՍՍ 7. ԲՆԻԿ ԺՈՂՈՎՐԴՆԵՐ/ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ			
Այս ստանդարտը չի վերաբերում Ծրագրին, քանի որ Հայաստանում բնիկ ժողովուրդներ չեն հայտնաբերվել:			
ԲՍՍ 8. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ			
8.1	**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐ ՝ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Ներառել մշակութային ժառանգության սքրինինգի և կառավարման ընթացակարգերը ԱՍՀՆ ԲՍԿՀ-ում՝ ԲՍՍ 8-ի և սույն ԲՀՊ-ի պահանջներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	ԱՍՀՆ/ԾԻԹ
8.2	**Պատահական գտածոներ**		ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ի շրջանակում նկարագրել և իրականացնել պատահական գտածոներին առնչվող ընթացակարգերը:	Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է Գործողություն 9.1.1-ի համար՝ ԲՍԿՀ-ի մշակում և իրականացում:	
ԲՍՍ 9. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ			
9.1	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ Յ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** ա. Մշակել և ընդունել Գործողություն 1.1-ի շրջանակում ԲՍ սքրինինգի գործիքի հիման վրա մշակված ԲՍԿՀ՝ բացահայտելու, գնահատելու, կառավարելու և վերահսկելու Ծրագրի 1-ին մասին առնչվող միջոցառումների ԲՍ ռիսկերը և ազդեցությունները՝ ԲՍՍ-ներին, տեղական օրենսդրության կիրառելի պահանջներին և սույն ԲՍՀՊ-ով նախատեսված լրացուցիչ միջոցառումներին համապատասխան: ԲՍԿՀ համակարգի յուրաքանչյուր տարրի ամփոփագիրը հրապարակել ԱՍՀՆ-ի, ինչպես նաև Բանկի կայքում՝ ներառյալ Բացառությունների ցուցակը: ԲՍԿՀ-ի բովանդակությունն ու ծավալը, ինչպես նաև դրա պատրաստման Տեխնիկական առաջադրանքը պետք է համաչափ լինեն ֆինանսական միջնորդների (ՖՄ-ներ) հետ կապված ռիսկերի և ազդեցությունների բնույթին և ծավալին և պետք է ներառեն հետևյալ տարրերը. ▪ ԲՍ քաղաքականություն, ▪ Աշխատանքի կառավարման հստակ սահմանված միջոցառումներ և ընթացակարգեր՝ ԲՍՍ2-ի դրույթներին համապատասխան, ▪ ԲՍԿՀ իրականացման կազմակերպչական կարողություն և մասնագիտական պատրաստվածություն՝ հստակ սահմանված դերերով և պարտականություններով, ▪ ԲՍ ռիսկերի սքրինինգի և կառավարման հստակ ընթացակարգեր, ներառյալ, ի թիվս այլոց, շահագրգիռ կողմերի ներգրավումը և հրապարակման պահանջները, ▪ Բացառությունների ցանկ՝ այն գործողություններով և ենթածրագրերով, որոնք չեն կարող ֆինանսավորվել համաձայն սույն ԲՍՀՊ-ի և համապատասխան ԲՍՍ-ների դրույթների, ▪ ԲՍԿՀ-ի արդյունավետության և ԲՍ կատարողականի մոնիթորինգի և հաշվետվականության ընթացակարգեր և դրանց չափման հստակ չափորոշիչներ, ▪ Հաղորդակցության արտաքին մեխանիզմ, ներառյալ հանրության և շահագրգիռ կողմերի հարցումներին և մտահոգություններին ժամանակին պատասխանելու մեխանիզմներ և միջոցներ, ▪ Պատահարների և վթարների մասին ծանուցում և հետագա հաշվետվությունների ներկայացման պահանջներ և	ա. Պատրաստել և ընդունել ԲՍԿՀ-ը և դրա տարրերի ամփոփագիրը հրապարակել մինչև Ծրագրի ուժի մեջ մտնելը. պահպանել և իրագործել ԲՍԿՀ-ն ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	▪ Ղեկավարության կողմից նշանակված ներկայացուցիչ, ով պատասխանատու կլինի Ծրագրի աջակցությամբ իրականացվող ՖՄ-ի ենթածրագրերի ԲՍ կատարողականի համար՝ համաձայն ԲՍՍ9-ի և այս ԲՍՀՊ-ի պահանջների: բ. Համաձայն վերը նշված Գործողություն 1.1-ի և համապատասխան ԲՍՍ-ների պահանջների՝ բոլոր առաջարկվող ՖՄ ենթածրագրերը համադրել ԲՍԿՀ-ում ներառված Բացառությունների վերջնական ցանկի հետ՝ բացառելու այն ենթածրագրերը, որոնք չեն կարող ֆինանսավորվել Ծրագրի շրջանակներում:	բ. ԲՍ ռիսկերի վերլուծության գործընթացի շրջանակներում իրականացնել ծրագրին համապատասխանող ՖՄ-ի պոտենցիալ ենթածրագրերի նախնական վերլուծություն՝ նախքան որոշելը, թե արդյոք այդ ենթածրագրերը իրավասու են Ծրագրից աջակցություն ստանալու համար:	
	գ. Պահանջել, որպեսզի Ծրագրում ներգրավված ՄՖՀ-ները հետևեն՝ ա) ԲՍԿՀ-ին, բ) Բանկի ԲՍՍ-ներին և գ) համապատասխան պետական ԲՍ կանոնակարգերին, որոնք վկայակոչված են ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ում: ՄՖՀ-ները, իրենց դերերին համապատասխան, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրենց ենթածրագրերն ունենան ԲՍ ռիսկերի կառավարման բավարար կարողություններ, այդ թվում՝ մշակելով ԲՍ կառավարման անհրաժեշտ գործիքներ և միջոցառումներ՝ այս ԲՍՀՊ-ի, Բանկի ԲՍՍ-ների, ազգային կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու համար, և ունենան անհրաժեշտ կարողություններ դրանց պատշաճ իրականացման համար՝ համաձայն ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ում նկարագրված ընթացակարգերի և դրա ընդհանուր բովանդակության: ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ն կներառի ձևանմուշներ՝ ԲՍ կառավարման գործիքների պատրաստումը ուղղորդելու համար:	գ. ԱՍՀՆ-ի և ՄՖՀ-ների միջև հարաբերությունները սահմանող փաստաթղթերում ներառել պարտավորություն, որը վերաբերում է անհրաժեշտ ԲՍ կառավարման գործիքների ու միջոցառումների մշակմանը, դրանց իրագործման համար նախատեսված ժամկետներին և պահանջվող կարողություններին: Վերահսկել այդ պարտավորությունների կատարումը ՖՄ ենթածրագրերի իրականացման ողջ ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:	
	դ. Անհապաղ տեղեկացնել Բանկին ԲՍԿՀ-ում կատարված ցանկացած փոփոխության մասին, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Վարկառուի՝ ՖՄ-ների/ՄՖՀ-ների կողմից իրականացվող գործողությունների ԲՍ ռիսկերը ստուգելու, բացահայտելու, դասակարգելու և վերահսկելու կարողության վրա:	դ. Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է վերը նշված Գործողություն Ե-ի համար:	

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	ե. ԲՍԿՀ-ում կատարված փոփոխությունների դեպքում՝ ընդունել և իրականացնել էական միջոցառումներ՝ Բանկի համար ընդունելի ձևով, ինչպես նաև ԲՍՍ-ներին և այս ԲՀՊ-ին համապատասխան: Նշված փոփոխությունները շտկելու համար Բանկի հետ համաձայնեցված ցանկացած ուղղիչ միջոցառում պետք է ներառվի թարմացված ԲՀՊ-ում:	ե. Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	
9.2	**ՖՄ-ներ** ա. Պահանջել, որ ծրագրում ներգրավված ՖՄ-ները ձևավորեն և պահպանեն անհրաժեշտ կազմակերպական կարողություններ և հմտություններ՝ ԱՍՀՆ-ի ԲՍԿՀ-ը՝ Բանկի ԲՍՍ-ներին համապատասխան իրականացնելու համար՝ հստակ սահմանված դերերով և պարտականություններով՝ համաձայն Գործողություն 9.1-ի և վերը նշված Գործողություն Ա(դ) կետի դրույթների: բ. Համագործակցել ՄՖՀ-ների հետ՝ վերանայելու և կատարելագործելու այդ կազմակերպություններում ներդրված ԲՍԿՀ-ների գործառույթները՝ կիրառելով որտեղ հնարավոր է բացթողումների վերացմանն ուղղված միջոցառումներ, կամ, այդ գործառույթների բացակայության դեպքում, պահանջել ՄՖՀ-ներից իրենց համապատասխան կազմակերպություններում ներդնել ԲՍԿՀ ՝ ԲՍՍ-ներին և ԱՍՀՆ -ի ԲՍԿՀ-ի պահանջներին համապատասխան: Պահանջել, որպեսզի ՄՖՀ-ները իրենց կազմակերպությունների կայքերի միջոցով հրապարակեն իրենց ԲՍԿՀ-ների տարրերը ՝ ներառյալ Բացառությունների ցանկը: գ. Պահանջել ՄՖՀ-ներից կիրառել ԲՍ ռիսկերի սքրինինգի ընթացակարգեր Ծրագրի մաս 1.2-ի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր գործողությունների համար՝ համաձայն սույն ԲՀՊ-ի Գործողություն 1.1-ի: Պահանջել ՄՖՀ-ներից բացառել ծրագրի պահանջներին հակասող գործողությունները և կիրառել համապատասխան մեղմացնող միջոցառումներ այն գործողությունների նկատմամբ, որոնցում բացահայտվել են ԲՍ ռիսկեր և ազդեցություններ՝ համապատասխան ԲՍՍ-ների և ԱՍՀՆ-ի և ՄՖՀ-ների ԲՍԿՀ-ների պահանջներին համապատասխան: դ. Պահանջել, որ ՄՖՀ-ները անհապաղ տեղեկացնեն ԱՍՀՆ-ին ՄՖՀ-ների ԲՍԿՀ-ների գործառույթներում կատարված ցանկացած փոփոխության մասին, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ՄՖՀ-ների՝ իրենց կողմից իրականացվող գործողությունների ԲՍ ռիսկերը ստուգելու, բացահայտելու, դասակարգելու և կառավարելու և վերահսկելու կարողության վրա:	ա. Նույն ժամանակահատվածը, որը նախատեսված է վերը նշված Ա(դ) գործողության համար: բ. Վերանայել և բարելավել ՄՖՀ-ների գործող ԲՍԿՀ-ները և հրապարակել դրանք Ծրագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 4 (չորս) ամսվա ընթացքում: գ. Ապահովել ԲՍ ռիսկերի սքրինինգի ընթացակարգերի և մեղմացման միջոցառումների կիրառումը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ ՄՖՀ-ների ԲՍԿՀ-ների մշակման և կատարելագործման համար համաձայնեցված ժամկետներին համապատասխան: դ. Պահանջել, որ ՄՖՀ-ները տեղեկացնեն ցանկացած փոփոխությունների վերաբերյալ՝ դրանց մասին տեղեկանալուց հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
	ե. ՄՖՀ-ների ԲՍԿՀ-ների փոփոխությունների դեպքում պահանջել, որ ՄՖՀ-ները ընդունեն և ներդնեն էական միջոցառումներ՝ Բանկի համար ընդունելի ձևով, որը նաև համահունչ կլինի ԱՍՀՆ-ի ԲԿՍՀ-ին, համապատասխան ԲՍՍ-ներին և սույն ԲՍՀՊ-ի պահանջներին: Բանկը պետք է անհապաղ տեղեկացվի նշված փոփոխությունների շտկմանն ուղղված ցանկացած միջոցառումների մասին, որոնք համաձայնեցված են ԱՍՀՆ-ի հետ:	ե. Ընդունել և կիրառել սահմանված միջոցառումները՝ դրանց կոնկրետ բնույթը Բանկի հետ համաձայնեցնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում:	
ԲՍՍ 10. ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ			
10.1	**ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ** Թարմացնել և իրականացնել ԲՍՍ 10-ի պահանջներին համապատասխան Ծրագրի շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը, որը, ի թիվս այլոց, պետք է ներառի այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն, որ շահագրգիռ կողմերին տրամադրվի ժամանակին, համապատասխան, հասկանալի և մատչելի տեղեկատվություն, նրանց հետ անցկացվեն խորհրդակցություններ՝ մշակութային առումով համապատասխան եղանակով, որը զերծ է մանիպուլյացիաներից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից և սպառնալիքից:	Ծրագրի մեկնարկից հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ժամկետում, այնուհետև ապահովել ՇԿՆՊ-ի իրականացումը Ծրագրի գործողության ամբողջ ընթացքում:	ԱՍՀՆ/ԾԻԹ՝ համակարգելով դրանց իրականացումը ԱՀԸ-ի և ՄՖՀ-ների հետ:
10.2	**ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ** ԲՍՍ 10-ով սահմանված կարգով վերանայել, հանրայնացնել, պահպանել և կիրառել ՀԿԲԼՄ՝ Ծրագրի վերաբերյալ բողոքներ և մտահոգություններ ստանալու և դրանց լուծումը արագ, արդյունավետ և թափանցիկ եղանակով խթանելու համար՝ մշակութային առումով համապատասխան և բոլոր ազդակիր կողմերի համար հասանելի եղանակով՝ անվճար և առանց հատուցման, ներառյալ անանուն ներկայացված մտահոգություններն ու բողոքները՝ ԲՍՍ 10-ով սահմանված կարգով: Բողոքների մեխանիզմը պետք է նախատեսի միջոցներ՝ ՍԾԲ/ՍՈ-ի վերաբերյալ բողոքներ ստանալու, գրանցելու և դրանց լուծմանը նպաստելու համար, այդ թվում՝ զոհերին գենդերային բռնության հարցերով զբաղվող կազմակերպություններ ուղղորդելով, այս ամենի համար ապահովելով անվտանգ կոնֆիդենցիալ և զոհակենտրոն մոտեցում:	ԱՍՀՆ ՀԿԲԼՄ համար՝ նախքան Ծրագրի մեկնարկը, ապահովել դրա կիրառումը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: Արդեն իսկ մասնակից ՄՖՀ-ների համար՝ նախքան միջոցների հատկացումը: Նոր մասնակցող ՄՖՀ-ների համար՝ որպես ՄՖՀ-ների և ԱՍՀՆ միջև ուժի մեջ մտնող ԲԱԾ Մասնակցության Համաձայնագրի մաս:	ԱՍՀՆ/ԾԻԹ՝՝ համակարգելով դրանց իրականացումը ԱՀԸ-ի և ՄՖՀ-ների հետ:
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ			

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
Ա. Կազմակերպական կառուցվածք Բ. Կարողությունների զարգացման պլան/միջոցառումներ. ԱՍՀՆ-ն կմշակի ԿԶԾ 1.1.2. ԱՍՀՆ-ն կստեղծի և կընդունի ԲՍԿՀ 2.1 ԱՍՀՆ-ն կմշակի ՎԿ-ներ Ծրագրի բոլոր աշխատակիցների համար: 2.3 ԱՍՀՆ-ն կստեղծի և կգործարկի ԲՄ Ծրագրի աշխատակիցների համար: 10.2 ԱՍՀՆ-ն կստեղծի ՀԿԲԼՄ:		